



0010, ք. Երևան, Հանրապետության հր. Կառավարական 3-րդ տուն  
3 Government Bldg, Republic Sq, Yerevan, 0010, Armenia  
0010, Армения, г.Ереван, Дом правительства, здание N3  
Էլ.փոստ /E-mail/ эл.почта min\_ecology@mnp.am  
Web page: www.mnp.am  
☎ (374 11) 818 520  
☎ (374 11) 818 506

№ 5/12.1/51324

<<21>> 04 2015թ.

Գավառի <<Օրիուս>> կենտրոնի  
համակարգող տիկին Լ. Ասոյանին

Հարգելի տիկին Ասոյան

Ի պատասխան Ձեր 2015թ. ապրիլի 16-ի թիվ AA-004 գրության, հայտնում  
եմ.

1. Ներկայում «Վոթերմաստեր կլասիկ 3» ֆրեզերային հողագործ-էքսկավատորը գտնվում է Վարդենիսի տարածաշրջանում և աշխատանքներ են իրականացվում Սևանա լճի Ծովակ համայնքի հատվածում:
2. Լճի մակարդակի մինչև 1903,5 մետր բարձրացման դեպքում (սկսած 1897,5 մետր բարձրությունից) անհրաժեշտ է մաքրել շուրջ 3850 հա անտառածածկ տարածք: Մինչև 2015 թվականի ապրիլի 15-ը մաքրված անտառտնկարկների ընդհանուր մակերեսը կազմում է 1823 հեկտար: Մինչև 2015թ. ծախսվել է 955,6 մլն դրամ: 2012թ. եղել է նաև 25մլն դրամի համաֆինանսավորում ՄԱԿ-ի Զարգացման ծրագրերի կողմից: Մաքրման աշխատանքները տարբեր տարիներին իրականացրել են <<Ուայդ Գեյթ>> ՍՊԸ-ն, <<Տրի Գրեն>> ՍՊԸ-ն ու <<Հ.Էլոյան և որդիներ>> ՍՊԸ-ը, <<Նաիրի բերրիություն>> ՍՊԸ-ն և <<Ճամբարակի ՃՇՇՁ>> ԲԲԸ-ն:
3. «Վոթերմաստեր կլասիկ 3» ֆրեզերային հողագործ-էքսկավատորի օգնությամբ մաքրված անտառտնկարկների ընդհանուր մակերեսը կազմում է 623,3 հեկտար:
4. «Վոթերմաստեր կլասիկ 3» ֆրեզերային հողագործ-էքսկավատորի շահագործման ծախսերը կատարվում են այն կապալառու կազմակերպության կողմից, որին վարձակալությամբ տրվում է էքսկավատորը:
5. Ծրագրվում է մաքրել մոտ 2000 հեկտար: Մաքրման համար նախատեսված տեղամասերը որոշվում են ծրագրերն իրականացնելու ժամանակ՝ պայմանավորված ջրի մակարդակի փոփոխությամբ:
6. 2015 թվականին նախատեսված է իրականացնել 179,2 մլն դրամ արժողությամբ 150,0 հեկտարի մաքրման աշխատանքներ: Աշխատանքներն իրականացվելու են 42 հա Նորատուսի և 108 հա Վարդենիսի տարածաշրջաններում <<Ճամբարակի ՃՇՇՁ>> ԲԲԸ կողմից:



7. Ջրածածկ տարածքների մաքրման արդյունքում գոյացած փայտանյութը հանձնվում է «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ին՝ իրացման նպատակով: Նախատեսվում է թափուկների մի մասը հատուկ տեխնոլոգիաների ներդրումից հետո վերածել խտացված վառելանյութի:
8. Մաքրման համար նախատեսված տարածքների ծառերը և թփերը հեռացվում են ամբողջությամբ՝ արմատներով:
9. Ոչ պատշաճ իրականացված աշխատանքներ չեն արձանագրվել:

Միաժամանակ հայտնում եմ, որ «Վոթերմաստեր կլասիկ 3» ֆրեզերային հողագործ-էքսկավատորը ձեռք է բերվել ոչ թե վարկային միջոցների հաշվին, այլ ՀՀ կառավարության 2010թ-ի N 886-Ն որոշմամբ հատկացված միջոցներով՝ ՀՀ բնապահպանության նախարարության «Բնապահպանական ծրագրերի կենտրոն» ՊՈԱԿ-ի (լուծարվել է ՀՀ կառավարության 13.01.2011թ. N 8-Ն որոշմամբ) կողմից:

Սևանա լճի հարակից ջրային տարածքների մաքրման աշխատանքների ընթացքին կարող եք ծանոթանալ «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ [www.epiu.am](http://www.epiu.am) կայքում:

Հարգանքով՝  
Աշխատակազմի ղեկավարի ժ/պ



Խ. Աղաբեկյան

Ա. Վարդանյան  
011-818-517